community

The New Apostolic Church around the world

03/2019/AM



Պաշտոն հասկացությունը

Խմբագրական՝ Համայնքն ապրում է և կազմավորվում

Ժամերգություն՝ Կյանքի պսակը

Եկեղեցական ուսմունք՝ Պաշտոն հասկացությունը

New Apostolic Church
International

Համայնքն ապրում է և ձևավորվում

Լուսանկարը՝ ՆԱԵ միջազգային

Սիրելի հավատացյալ եղբայրներ ու քույրեր,

ետևում թողինք արտակարգ իրադարձություններ՝ մի քանի օր մենք ամբողջ աշխարհի երիտասարդ հավատցյալ եղբայրների ու քույրերի հետ տոնեցինք երիտասարդության միջազգային օրը: Մենք ճաշակեցինք միասնություն, երաժշտություն և զրույցներ այդ մեծ շրջանակում: Ես համոզված եմ, որ դուք ոգևորությունից արդեն շատ բան եք ձեզ հետ տարել, անգամ, եթե դուք առանձին դեպքերում չեք կարողացել տեղում լինել: Մեկ շաբաթ անց մենք տոնեցինք Հոգեգալուստը: Մենք ապրեցինք ժամերգությունը որպես մի մեծ համայնք և շնորհակալություն հայտնեցինք Սուրբ Երրորդություն Աստծուն ու փառաբանեցինք նրան: Գերմանիայի Գոսլար քաղաքում միասնություն կազմելը մենք օգտագործում ենք նաև շրջանային առաքյալների և նրանց օգնականների այս տարվա մեր առաջին միջազգային ժողովի համար:

Հոգեգալստյան տոնի հետ մեկտեղ կարևոր է ապրիլին ներկայացված պաշտոն հասկացությունը: Մենք այսուհետ տարբերակում ենք պաշտոնի լիազորությունն ու ղեկավար դերը: Պաշտոնի երեք մակարդակներին է պատկանում սակավագի պաշտոնը, քարոզչական պաշտոնը և առաքյալների ծառայությունը: Ղեկավար հինգ դեր ունեցողներին են պատկանում համայնքի առաջնորդը, շրջանային առաջնորդը, առաքյալը, շրջանային առաքյալը և գլխավոր առաքյալը: Պաշտոններին ձեռնադրվում են եղբայրները: Ղեկավար դերի համար հանձնարարությունը եղբայրները ստանում են աղոթքով և նրանց գլխին ձեռքերը դնելով: Դրանով մենք ընդգծում ենք ղեկավար դերի կարևորությունը: Հետագայում նշանակվում են օգնականները, օրինակ, գլխավոր առաքյալի օգնականը, շրջանային առաքյալի օգնականը, եպիսկոպոսները, շրջանային ներկայացուցիչը և համայնքի առաջնորդը: Հետագայում այլևս չեն ձեռնադրվելու ավետարանիչներ, հովիվներ, շրջանային ավետարանիչներ և շրջանային ավագներ: Մի հիշեցում անցյալի մասին՝ այն եղբայրները, ովքեր արդեն ձեռնադրված են, շարունակելու են կատարել իրենց պաշտոններից բխող ծառայությունները:

Պաշտոնների ծառայությունը, ինչքան էլ այն կարևոր լինի, կազմում է այն բազում ծառայությունների մի մասը միայն, որոնք կատարվում են համայնքներում: Հանդես գալով բոլոր առաքյալների անունով՝ ես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր քույր-եղբայրներին, ովքեր նվիրվում են համայնքներին և աջակցում են մեր աշխատանքին՝ նաև իրենց զոհաբերական ընծաներով: Ամբողջ սրտով շնորհակալություն: Թող Աստված լիառատ օրհնի ձեզ:

Սրտանց ողջույններ

Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

Մանիլայում, Ֆիլիպիններում 2018-ի նոյեմբերի 18-ին գլխավոր առաքյալը հանդիպեց 500 հավատացյալների հետ: Համացանցի միջոցով ժամերգությունը հեռարձակվեց շատ համայնքներ:

Լուսանկարում՝ Հարավ-Արևելյան Ասիայի ՆԱԵ

Կյանքի պսակը

Հակոբոս 1,12

Երանելի է այն մարդը, որ համբերում է փորձության, որովհետև, եթե փորձության մեջ հաստատ լինի, կստանա կյանքի պսակը, որը Տերը խոստացավ իրեն սիրողներին:

Սիրելի եղբայրներ և քույրեր, այսօրվա ժամերգությունը առանձնահատուկ է: Հազվադեպ է պատահում, որ Մանիլայում այսքան մեծ համայնք հավաքվի և միաժամանակ այստեղ այսքան շատ առաքյալներ ներկա լինեն: Ինչպես գիտեք, սա նաև առանձնահատուկ օր է, քանի որ ձեր շրջանային առաքյալը անցնում է հանգստի և նոր շրջանային առաքյալ է պաշտոնի կարգվելու, որն էլ այսօրը մի քիչ յուրահատուկ է դարձնում: Մենք օգտագործում ենք առիթը շնորհակալություն ասելու երկնային Հորը այն ողջ օրհնանքի համար, որը մենք ստացել ենք ձեր շրջանային առաքյալի միջոցով: Մենք Աստծուն շնորհակալություն ենք հայտնում այն

բանի համար, որ նա օրհնել է շրջանային առաքյալի աշխատանքը: Դուք կարիք չունեք մտահոգվելու, անգամ ,եթե փոփոխություն է տեղի ունենում, Աստված մնում է նույնը: Նպատակը մնում է նույնը և նույնն է մնում այն ճանապարհը, որով մենք ենք գնում: Մենք հետևում ենք Քրիստոսին, և մենք դա անելու ենք նաև ապագայում: Հիսուս Քրիստոսը մեր Տերն է, նա է ճանապարհը և նա մեզ շարունակելու է օգնել, ինչպես մինչև հիմա է օգնել:

Ո՞րն է մեր նպատակը: Աստվածաշնչյան մեր խոսքում նկարագրված է ,, .

Երանելի է այն մարդը, որ համբերում է փորձության, որովհետև, եթե փորձության մեջ հաստատ լինի, կստանա կյանքի պսակը, որը Տերը խոստացավ իրեն սիրողներին,,: Կյանքի պսակը փրկության պատկերն է: Աստվածաշնչում հաճախ է օգտագործվում պսակ բառը, երբեմն կյանքի հետ կապված, ինչպես այստեղ: Կյանքի պսակը , հաճախ նաև ,, արդարության պսակը,, / Տիմոթեոս Բ 4,8/, ,, Փառահեղության պսակը,, / Պետրոս Ա 5,4/ և բոլոր այս պատկերները նկարագրում են նույնը՝ մեր փրկությունը: Դա պատկերն է հավիտենական կյանքի՝ Աստծո հետ իր արքայությունում միասնության պատկերը: Որպեսզի նկարագրվի այն ճանապարհը, որը պետք է գնալ, որպեսզի ստանան այդ պսակը, Նոր կտակարանը հաճախ օգտագործում է մրցապայքար հասկացությունը: Պողոս առաքյալն ու Հակոբոսը անդրադառնում են այդ պատկերին: Այն ժամանակ տեղի էին ունենում մեծ մրցապայքարներ, ատլետները մրցում էին, և հաղթողը ստանում էր պսակ ոչ թե ոսկուց, այլ դափնեպսակի ձևով: Այս համեմատությամբ առաքյալները ցանկանում էին հստակեցնել, որ հավիտենական կյանքի հասնելու և Աստծո արքայություն գնալու համար ատլետների նման պետք է մրցապայքարի դուրս գալ:

Մրցապայքարը ամենից առաջ պահանջում է շատ էներգիա: Որպեսզի հասնենք փրկության, մենք պետք է մեր մտածելակերպն ու գործը համաձայնեցնենք Աստծո կամքին: Որպեսզի փրկվեն, պետք է հետևեն Հիսուսի օրինակին: Դա պահանջում է էներգիա և տոկունություն, ինչպես մրցության ժամանակ է: Դա առանց լարվածության չի լինում: Սա առաջին կետն է:

Որպեսզի Աստծո արքայություն գնան, պետք է շատ ուժ գործադրեն: Հենց այնպես այնտեղ զբոսնելով չեն գնում, դա մրցություն է, դա պահանջում է տոկունություն, ինչպես ցանկացած մրցության ժամանակ է լինում:

Ատլետի նման պետք է շատ մարզվել: Փրկությունն ու ազատությունը ազատ ժամանակի զբաղմունք չեն, դրանք ամենօրյա մարտահրավերներ են: Մենք պետք է ամեն օր մեզ վրա ինտենսիվ աշխատենք: Մենք պետք է շատ բան զոհաբերենք: Մենք պետք է աշխատենք, որ Աստծո կամքին համաձայնեցնենք մեր միտքն ու գործը:

Որպեսզի Աստծո արքայություն գնան, բավական չէ միայն այցելել ժամերգությունների, ինչ որ բան նվիրաբերել գանձանակին, Աստծուն աղոթել և ապրել որպես քրիստոնյա: Դրա համար ավելի շատ նվիրաբերում է անհրաժեշտ, որպեսզի իսկապես վստահ լինենք, որ մեր մտքերն ու գործերը համապատասխանում են Աստծո կամքին: Ատլետի հետ համեմատությունը դա շատ հասկանալի է դարձնում:

Պահանջվում է ուժ մեր մտքերն ու գործերը Աստծո կանքին համաձայնեցնելու համար:

Ով մրցության է մասնակցում, նա շատ բան ունի անելու, եթե ուզում է հաղթանակի հասնել: Երբեմն նա ստիպված էլինում ինչ որ բանից հրաժարվել, նա հոժարակամ դա անում է, քանի որ նրա համար հաղթանակը շատ կարևոր է: Երբեմն մենք էլ ենք ստիպված լինում հրաժարվել ինչ որ բանից, քանի որ մեր փրկությունը մեզ համար ամենակարևորն է: Ես ուզում եմ կոնկրետացնել: Երբեմն որոշումը ստիպված ենք կայացնում: Օրինակ, կարելի է լսել այսպիսի խոսք. ,, Եթե դու այնտեղ գնաս, դու կարող ես շատ փող աշխատել,,: Հասկանալի է, որ մենք բոլորս էլ կարիք ունեն փողի: Սակայն, մենք ամրագրում ենք, որ չկա համայնք և հնարավորություն չկա ժամերգության այցելելու: Ապա հարց է առաջանում՝ ինչ եմ անում ես: Ընդունու՞մ եմ առաջարկը և գնու՞մ եմ այնտեղ: Ես կարող եմ այնտեղ շատ փող վաստակել: Սակայն ես կարող եմ տարվա մեջ միայն երկու-երեք անգամ ժամերգության հաճախել: Ի՞նչ որոշում կկայացնես դու: Շատերն այդ դեպքում կասեն.,, Այո, բայց ես ուզում եմ լավ կյանքով ապրել, քանի որ ես ավելի շատ փող կստանամ,,: Դու վստա՞հ ես, որ լավ կյանք ես ունենալու առանց Սուրբ Հաղորդության, առանց Աստծո խոսքից բխող մխիթարության, առանց



քույր-եղբայրների հետ միասնության: Այստեղ ես դնում եմ հարցական:

Ինչպես արվ ում է մրցույթի ժամանակ, եթե ուզում են Աստծո արքայություն գնալ, պետք է երբեմն զոհաբերություններ կատարեն: Ատլետը պատրաստ է երբեմն տառապել: Մենք էլ դրանից ապահովագրված չենք: Մրցապայքարում կան կանոններ, որոնց պետք է ուշադրություն դարձնել: Յուրաքանչյուր կարգ ու կանոն ամրագրված է կանոններով , որոնք պետք է պահպանել, եթե ուզում են հաղթել: Դա վերաբերում է նաև մեր փրկությանը: Հիսուսը շատ հստակ է ասել: Նա խոսել է այն մասին, որ կարելի է բարի գործեր կատարել, բայց դրանք արժեք չեն ունենա, եթե ուշադրություն չդարձնեն որոշակի կանոնների վրա: Նա խոսում է նրանց մասին, ովքեր մեծ գործեր են արել իմ անունով, որոնց, սակայն, նա ասում է.,,Ես ձեզ երբեք չեմ ճանաչել, հեռու կացեք ինձանից դուք ամենքդ, որ անօրինություն եք գործում,, / Մատթեոս 7,23/:

Փրկության համար մրցապայքարի կանոններից է սիրո պատվիրանը: Ինչ էլ որ դու անես, արա դա Տիրոջ և մերձավորի հանդեպ սիրուց ելնելով: Ինչը սիրուց ելնելով չի արվում, լիովին անօգուտ է: Սա կանոն է: Այն չի հայտնագործվել Նորառաքելական եկեղեցում: Այս կանոնը Հիսուս Քրիստոսն ինքն է հիմնել: Անգամ, եթե Տիրոջ համար արտակարգ գործեր են արվում, անօգուտ կլինեն, եթե մեր մոտիվացիան սերը չլինի: Մրցապայքարը մի քիչ այլ է, քան սպորտային զբաղմունքը ազատ ժամանակ, երբ կարող են անել այն, ինչ ցանկանան:

Երբ մասնակցում են մրցապայաքարի, պետք է պահպանեն կանոնները: Մրցապայքարում միայնակ չեն լինում, կան խաղացողներ, ովքեր չեն ցանկանում, որ դու հաղթես: Սա է մրցապայքարի սկզբունքը:

> Ինչ էլ դու միշտ անես, դա արա Տիրոջ և մերձավորի հանդեպ սիրուց ելնելով:

Սակայն փրկության համար մրցապայքարը բոլորովին այլ է: Որպեսզի մեր կյանքը, մտքերը Աստծո կամքին համաձայնեցնենք, մենք չպետք է մյուսների դեմ պայքարենք: Այս պայքարում հակառակորդը չարն է: Նրա դեմ ենք հանդես գալիս: Եվ ես կարող եմ ձեզ վստահեցնել, նա կցանկանա անպայման խանգարել, որպեսզի պայքարը դու չշահես: Նա դրա համար ամեն ինչ կանի, որ վերջում ինքը հաղթող լինի: Դա մեր թշմանին է:

Բոլոր նրանք, ովքեր կհաղթահարեն լարվածությունները, ուշադրություն կդարձնեն

կանոնների վրա, կսիրեն քրիստոնյաներին, ովքեր հավատարիմ կմնան մինչև վերջ, կստանան պսակը: Սակայն, մենք պետք է պայքարենք մեր թշնամու դեմ, չարի դեմ: Տիրոջ օգնությամբ մենք կարող ենք նրան հաղթել:

Յուրաքանչյուր մրցապայքարում կա դատավոր, ով ուշադրություն է դարձնում այն բանի վրա, որ կանոնները պահպանվեն, և նա է այն միակը, ով որոշում է, թե վերջում ով է հաղթողը: Նաև փրկության համար պայքարում կա դատավոր՝ Հիսուս Քրսիտոսը: Նա է որոշելու, թե ովքեր են պատկանում հաղթողներին: Նա դատելու է յուքարանչյուրի մտքերն ու գործերը: Այդ պատկերացումը մարդկանց դուր չի գալիս, սակայն, Հիսուսն ինքն ասել է, որ դու դատվելու ես քո գործերի համաձայն:

Այդ մրցապայքարի վերջում կարող եմ Հիսուսի առաջ կանգնել և ասել.,, Այս, բայց տես, թե ինչ են արել մյուսները – հենց նույնը,,: Ես չեմ կարող ասել. ,, Մյուսները չեն պահել կանոնները, դրա համար էլ ես էլ չեմ անելու,,: Նա իր գալստյան ժամանակ ինձ դատելու է իմ մտքերի ու գործերի համաձայն, ուշադրություն չդարձնելով այն բանի վրա, թե ինչ են արել մյուսները: Մենք չենք կարող ուրիշներին վկայակոչել, որպեսզի մեր պահվաքծն արդարացնենք: Մենք պետք է հասկանանք, որ Հիսուսը մեզ դատելու է և և հարցնելու է մեր մոտիվացիայի մասին: Նրանք, ովքեր ընդունվում են, հենց նրանք են, ովքեր սիրում են Հիսուս Քրիստոսին: Մենք պետք է չափվենք մեր սիրո չափով և փրկությանը ձգտելու չափով: Դա է դատվելու հիմքը: Անշուշտ, յուրաքանչյուր իրավիճակում չէ, որ մենք հաղթում ենք չարին: Սակայն, մի մոռացեք, քույրեր և եղբայրներ, որ մենք չափվելու ենք մեր սիրո ուժգնության չափով, փրկվելու մեր կամքի չափով և Աստծո կամքի համաձայն գործելու վճռականությամբ: Մի կողմից դա մխիթարություն է, քանի որ մենք էլ պետք է ընդունվենք, եթե անգամ ամեն ինչ չիրականացնենք: Մյուս կողմից էլ մենք պետք էցլուրջ ընդունենք, քանի որ, եթե մենք ինքներս մեզ նայենք, ապա կհամոզվենք, որ Աստծո կամքը կատարելու ձգտումը երբեմն ավելի ուժեղ կարող է լինել:

Մենք, ուրեմն, շատ էներգիա պետք է ծախսենք, մենք պետք է պայքարենք սիրո օրենքի վրա ուշադրություն դարձնելու համար, մենք պետք է թշնամուն չարին հակադրվենք և պետք է ըմբռնենք, որ դատվելու ենք Հիսուս Քրիստոսի կողմից:

Շրջանային առաքյալ Ուրս Հեբայզենը /Հարավ-Արևելյան Ասիա/ անցնում է հանգստի – 36 տարվա առաքյալի պաշտոնում ծառայելուց հետո: Հրաժեշտին գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը ընա գործունեությունը բնութագրեց երեք հասկացությամբ՝ եռանք, սեր և հավատարմություն Աստծուն:

Շատ երկրներ, շատ ժողովուրդներ, շատ մշակույթներ: Հեշտ առաջադրանք չէ այն, որն ընդունում է Էդի Իսնուգրոհոն՝ որպես նոր շրջանային առաքյալ Հարավ-Արևելյան Ասիայում: Թե ինչպես կարելի է այն հաջողել, առաջադրանքը տալիս ասաց գլխավոր առաքյալը:

Մի վերջին կետ էլ կա: Ատլետը չի որոշում, թե երբ է տեղի ունենալու մրցույթը: Նա չի կարող ասել,, Օ, ոչ, ոչ այսօր: Ես լավ տրամադրություն չունեմ, ավելի լավ է թողնենք, որ Օլիմպիական խաղերը սկսվեն վաղը,,: Ինչ որ մեկը ամրագրում է մրցույթի սկիզբը և պետք է դրան պատրաստ լինել:

Աստված որոշել է, որ մրցույթը հենց այսօր է տեղի ունենա, և դա մենք պետք է ըմբռնենք: Մենք չենք կարող Հիսուսին ասել. ,, Ես դեռ շատ երիտասարդ եմ, մրցապայքարը հետաձգենք մինչ տասը տարի հետո, այդ ժամանակ կարգին կլինի,,: Պայքարը տեղի է ունենում հենց այսօր, այստեղ, քո կյանքում: Եկեք բոլոր ուժերը ներդնենք, որ այն հաղթենք: Հիսուսի օգնությամբ մենք կարող ենք հաղթել, կարող ենք փրկության հասնել և ստանալ պսակը:

Ինչու՞մն է կայանում փրկությունը: Ես կասեի, որ դա կյանքի պսակն է, հավիտենական կյանքը, Աստծո հետ հավիտենական միասնությունը: Պսակը հաղթանակի նշանն է,փառքի նշանն է: Ով մասնակցել է առաջին հարությանը, ով ընդունել է հարության մարմինը, փառահեղ մարմինը և գնացել է Աստծո արքայություն, նա Հիսուս Քրիստոսի փառքի մասնիկը կունենա:

Պսակը նաև տիրակալության և իշխանության նշանն է: Եվ ասվում է, որ նրանք, ովքեր կհաղթահարեն, ովքեր մրցապայքարը կնվաճեն, ղեկավարելու են Քրիստոսի հետ: Նրանք կլինեն Աստծո և Քրիստոսի քահանաներ և նրանց հետ կղեկավարեն հազար տարի / Հայտնություն 20,6/:

Բոլոր դեպքերում, մենք հստակեցնում ենք, թե ինչ է նշանակում այդ ղեկավարությունը: Հիսուսի խաղաղության թագավորությունում Քրիստոսը ոչ մի քաղաքական իշխանություն չի իրականացնելու : Այդ կառավարումը տիակալություն չէ քաղաքական , ժամանակավոր իմաստով: Եթե Հիսուսը ղեկավարում է, դա նշանակում է, որ նա իր Ավետարանի անխաթար տեղեկացումն է հաստատում: Դա Քրիստոսի տիրակալությունն է հազարամյա խաղաղության թագավորությունում: Նա տիրելու է և ոչ ոք չի կարող նրան այդ գործում խանգարել իր Ավետարանը տարածելու և մարդկանց փրկելու: Հիսուսը ինքը շատ հավատարիմ է: Նա ղեկավարելու է որպես ծառայող: Մարդու ծառայությունը էլ բոլոր մարդկանց փրկության համար է:

Ուրեմն, եթե նշանակում է, որ մենք նրա հետ ղեկավարելու ենք, նշանակում է, որ նրանք, ովքեր նրա հետ իր արքայությունում են լինելու, ծառայելու են իրեն և մարդկանց այն նպատակով, որ փրկությունը հնարավոր դարձնեն բոլոր մարդկանց համար: Նրանք բոլորին տեղեկացնելու են

Գլխավոր առաքյալին ուղեկցում էին շրջանային առաքյալներ Յուրգ Զբինդեն / Շվեյցարիա, նկարում/, Մարկ Վ ոլլան / Կանադա/, Պեթեր Շուլթեն / Արևմտյան Խաղաղօվկիանոսային տարածաշրջան/ և Ուրս Հեբայզենը:

Ավետարանը: Նրանց ղեկավարումը ծառայություն է լինելու: Հիսուսը մի առակ է պատմում, առակ տասը մնասների մասին / Ղուկաս 19, 11-27/: Տերը գալիս է իր ծառաներիի մոտ և յուրաքանչյուրին տալիս է մի ֆունտ: Նրանք պետք է աշխատեին այդ փողով, դա պետք գործի մեջ ներդնեին: Մեկը շատ աշխատասեր էր և հաջողակ, նա մեկ ֆունտից ստանում է տաս ֆունտ եկամուտ: Երբ Տերը վերադառնում է, ասում է նրան.,,Ազնիվ և բարի ծառա, քանի որ այդ փոքր բանի մեջ հավատարիմ եղար, իշխանություն ունեցիր տասը քաղաքների վրա,,:

Մեկ ուրիշտ փողը ներ էր դրել և հինգ ֆունտ եկամուտ ստացել: Նրա տերը նաև դրա համար էր ուրախ և ասում էնրան.,, Իսկ դու իշխանություն ունեցին հինգ քաղաքների վրա,,: Ծույլ ծառան, ով ոչինչ չէր արել այդ փողով, ոչինչ չստացավ: Նրանք տարբեր վարձատրություններ ստացան: Մեկը իշխանություն ստացավ տասը քաղաքների վրա, մյուսը՝ հինգ:

Եթե իշխանությունը հասկացվում է տիրակալության իրականացում, կարելի է ասել.,, Ինչ լավ է տասը քաղաքների վրա իշխանություն ունենալը: Դա ավելի լավ է , քան իշխել հինգ քաղաքների վրա,,: Սակայն դա այդպես չէ: Խոսքը տիակալության մասին չէ: Բոլոր միայն ծառաներ և սպասավորներ են: Խաղաղության թագավորությունում բոլորը ծառայելու են Աստծուն: Սակայն, մենք տարբեր ձևերով մեր հնարավորություններին ու ունակություններին համապատասխան ենք ծառայելու: բոլոր դեպքերում մենք մնում ենք ծառաներ: Ծառայությունները տարբեր են լինելու, սակայն պսակը, վարձատրությունը նույնն է լինելու, նրանք հավերժ լինելու են Հիսուսի մոտ: Դա է կյանքի պսակը: Եվ պատմության ավարտն այն է, որ բոլորը, ովքեր վարժվել են նոր արարչագործությանը, ծառայելու են Աստծուն և ղեկավարելու են նրա հետ: Այդ կապվածությունը մնում է: Նրանք մասնակցելու են նրա փառահեղությանը և վեհությանը և հավիտենական ծառայելու են նրան:

Սա է մեր ապագան, սիրելի քույրեր ու եղբայրներ: Եկեք ճշմարիտ մրցողներ լինենք: Եկեք ամեն օր այն բանի համար պայքարենք, որ մեր մտքերն ու գործերը համաձայնեցված լինեն Աստծո կամքի հետ: Դա շատ դժվար է: Դա նշանակում է տառապանք: Ըմբռնենք սա:

Եկեք ուշադրություն դարձնենք կանոններին, գործենք Տիրոջ և մերձավորի հանդեպ սիրուց ելնելով: Մենք չպետք է պայքարենք մեր քույրերի ու եղբայրների դեմ: Մենք պետք է պայքարենք չարի դեմ: Երբեմն հաղթում ենք, երբեմն՝ տանուլ տալիս, դա մենք լավ գիտենք: Ամեն ինչ չափվում է մեր սիրով և ձգտումով:

Եկեք ընդունենք այդ պայքարը: Վավատարիմ մնացողը հասնելու է հաղթանակի: Նրանք, ովքեր իսկապես սիրում են Քրիստոսին, ընդունելու են պսակը:

Հիմնական մտքեր

Որպեսզի հասնենք կյանքի պսակին, մենք պայքարելու ենք, որ

- մեր մտքերն ու գործերը համաձայնեցնենք Աստծո կամքի հետ,
- Ուշադրություն դարձնենք Աստծո և մերձավորի հանդեպ սիրո օրենքին:

Պայքարը պահանջում է նաև զոհողություն և տառապելու պատրաստակամություն: Նրանք, ովքեր որպես հաղթողներ դուրս կգան պայքարից, Քրիստոսի հետ ղեկավարելու են խաղաղության թագավորությունում:

Առաքյալ ՊավելԳամովի վերջին ժամերգությունները Հայաստանի նորառաքելական համայնքներում

Լուսանկարը՝ Հայաստանի ՆԱԵ

Առաքյալը Սևանի համայնքում է

Առաքյալ Գամովը կնոջ և դստեր հետ

Մայիս ամսին Հայաստան այցելեց առաքյալ Պավել Գամովը: Նրան ուղեկցում էին կինն ու դուստրը: Առաքյալի պաշտոնում դա նրա վերջին այցն էր, քանի որ հունիս ամսվա վերջին նա անցնելու է հանգստի: Հայաստանի նորառաքելական եկեղեցու բոլոր անդամները մի կողմից տխուր էին, քանի որ նույն ժամանակահատվածում հրաժեշտ են տալիս երկու առաքյալների / Վիլհելմ Հոյերին և Պավել գամովին/ , որոնք երկար տարիներ հոգու խնամքի աշխատանք են տարել Հայաստանում, մյուս կողմից էլ ուրախ են, որ ունեն նոր առաքյալ՝ ի դեմս Յենս Լինդեմանի: Հայաստանի նորառաքելական երեղեցու բոլոր քույր-եղբայրները շատ շնորհակալ են առաքյալ Պավել Գամովին, որ նա այդ տարիների ընթացքում իր քարոզների միջոցով ուժեղացրել է նրանց հավատը: Յուրաքանչյու ժամերգության ավարտին առաքյալը հաճույքով պատասխանում էր քույր-եղբայրների բոլոր հարցերին: Այս անգամ ևս նա ժամերգություններ անցկացրեց Հայաստանի բոլոր համայնքներում: Բոլոր քույր-եղբայրները ուշադիր լսում էին նրան ու շնորհակալություն հայտնում երկար տարիների ծառայության համար: Նրանք շնորհակալություն էին հայտնում նաև նրա կնոջն ու դստերը, որ նրանք եկել են Հայաստան՝ նաև իրենց տեսնելու: Առաքյալի կինն ու դուստրը շատ գոհ էին, որ ծանոթացել են նման հավատացյալ քույր-եղբայրների հետ: Յուրաքանչյուր համայնքում

Առաքյալը Գյումրիի համայնքի մանկական երգչախմբի երեխաների հետ

առաքյալին նվիրեցին ծաղիկներ, ցանկացան երջանկություն և երկար տարիների խաղաղ կյանք: Նրանք նաև հույս հայտնեցին , որ նա ժամանակ առ ժամանակ կայցելի իրենց: Առաքյալ Գամովը շնորհակալություն հայտնեց նաև սպասավոր բոլոր եղբայրներին միասնական հաջող աշխատանքի համար և հաջողություն ցանկացավ ապագայի համար:

Ջրհեղեղից հետո՝ առաջին օգնությունից մինչև վերակառուցում

Կապույտ, պայծառ երկինք, կանաչ մարգագետին – արդյո՞ք սա արձակուրդի ժամանակ արված մի լուսանկար է: Այստեղ ևս մի գյուղ էլ կար: ,, Ամենուրեք ավերածություններ,, . ասում է եպիսկոպոս Ալվին Վիթթենը: Մեկ շաբաթ շարունակ նա այցելել է Բեիրայում գտնվող Հարավ-Աֆրիկյան Նորառաքելական եկեղեցի:

Բեիրան 500 000 բնակիչ ունեցող նավահանգստային քաղաք է Մոզամբիկում, որտեղ ,, Իդաի,, կոչվող փոթորիկը մարտ ամսին ավերածությունների ենթարկեց այդ ցամաքամասը: Ցիկլոնի ուժգնությունը այդ երկրում ժամում հասավ մինչև 200 կմ-ի: Փոթորկից օրեր առաջ և հետո տևական անձրևներ եղան: Ավերման հետագիծը անցավ նախ Մալավիով, հետո Մոզամբիկով և ապա՝ Զիմբաբվեով:

Նեղության վերջը տեսանելի չէ

,, Իրավիճակի մասին ռեպորտաժը,, հաղորդվեց ՄԱԿ-ի մարդասիրական գործերով համակարգողին: Մալավիի և Զիմբաբվեի շուրջ ամեն ինչ խաղաղվեց: Սակայն, Մոզամբիկից ամեն օր նոր լուրեր էին գալիս:

Բնական աղետը պատճառ հանդիսացավ ավելի քան 600 զոհի: Գրեթե 240 000 տուն ավերվեց կամ ծանր վնասվեց: Մոտ 160 000 մարդ ապրում է ավելի քան 80 կարիքավորների ապաստարաններում: Խմելու մաքուր ջրի պակասի պատճառով բռնկվեցին համաճարակներ: Գրանցվեց վարակների 4072 դեպք: Վերջը դեռ չէր երևում: Ցամաքի առանձին շերտեր ջրհեղեղից դեռ երեք շաբաթ անց մնացել էին ջրի տակ: Մոտեցել էր նաև տարվա անձրևների սկսման ժամանակը:

Օգնողները հույս են տալիս

Սակայն, կան նաև լավ տեղեկություններ: Օգնող մեծ կազմակերպությունները, օրինակ, Կարմիր խաչը, տեղում են և օգնություն են ցույց տալիս: Ավելի քան 860 000 մարդ ապահովվեց սննդամթերքներով: Գրեթե այդքան մարդ էլ ներարկում ստացավ խոլերայի դեմ: Դրանից բացի, սկսվում է սերմացուների բաժանումը, որպեսզի նորից մշակեն ավերված ցանքատարածքները:

,, Շատ հրաշալի է տեսնել, թե ինչպես են այստեղ միասին աշխատում օգնող կազմակերպությունները,, . հաղորդում է եպիսկոպոս Վիթթենը Մոզամբիկի իր աշխատանքային տարածաշրջանից: Նորառաքելական եկեղեցուն են պատկանում առաքյալների սպասարկության ներքո գտնվող տասնմեկ մարզ՝ շուրջ 190 000 անդամով: Ջրհեղեղը ամենածանր հետևանքներ է թողել առաքյալ Ագոստինհո Դզիմբայի սպասավորության ներքո գտնվող տարածաշրջանի 43 համայնքներում: Ութ եկեղեցի լիովին ավերվել է, շատերն էլ վնասվել են:

Լուսանկարը՝ ՆԱԵ- բարեգործական Ալվին Վիթթեն

Վերակառուցումը սկսվում է քայլ առ քայլ

Մենք արձագանքու՞մ ենք Մոզամբիկում կարիքի մեջ գտնվող մարդկանց։ ,, Նրանք ոչ մի անգամ շատ չեն ունեցել և վարժված են զրկանքների,, . ասում է եպիսկոպոս Վիթթենը։ Նրանք անում են այն, ինչը ստիպված են անել, որպեսզի կարողանան շարունակել գործել։ Նրանք հավաքվում և նորից են կառուցում։ ,,Եվ դրան պետք է օգնի Հարավային Աֆրիկայի նորառաքելական եկեղեցին, ավելի կոնկրետ՝ նրա ,,Մասախե ֆոնդ,, օգնող կազմակերպությունը։

Մոզամբիկում ջրհեղեղի մասին լուրը լսելուց հետո եկեղեցու անդամների մոտ օգնելու ցանկություն առաջացավ։ Հիմնադրամի համար մեկնարկեցին նվիրատվությունները։ Փողը պետք է գնա դպրոցների վերակառուցման համար։ ,, Երեխաները իրենց դպրոցական համազգեստներով ուզում են դպրոց գնալ և պարապմունքներ անել, բայց դպրոցներ չկան,, . պատմում է եպիսկոպոս Վիթթենը իրավիճակի մասին, որը իրեն շատ է հուզել։

Օգնությունները գալիս են արագությամբ

Դպրոցական նախագծի համար աշխատանք սկսեց ,, ՆԱԵ- բարեգործականը,,։ Գերմանիայից եկող օգնության հետ մեկտեղ արդեն Մոզամբիկում մտածում են վերակառուցման մասին, օգնությունը հասնում է նաև Մալավի և Զիմբաբվե, այդ մասին հաղորդում է նախագծի համակարգող Յոանա ֆոն Յարմերսթեդը։ 15 000 մարդ ստանում է սննդամթերքների փաթեթներ, ծածկոցներ, բրեզենտներ և ջրի մաքրման համար քլորի հաբեր։ Վիճակը դժվար է Հարավային Մալավիում, այստեղ ուղարկվում է նաև բժշկական օգնություն, 1000 մարդ երեք ամիս շարունակ ստանում է ցավազրկող դեղեր, հակաբիոտիկներ, վիրակապեր, թերսնության դեմ սննդային լրացուցիչ հավելումներ ։

Այս առումով մեծ աշխատանք է կատարում ՆԱԵ-բարեգործականը Նորառաքելական եկեղեցու օգնող կազմակերպության , ինչպես նաև ,, Օգնիր՝ ինքդ քեզ օգնելու համար,, կազմակերպության հետ միասին։ Օգնող կազմակերպությունը ֆինանսական օգնությունը ստանում է ոչ միայն ընթացիկ նվիրատվություններից, այլ նաև Հարավային Գերմանիայի,, նորառաքելական ,,հուման ակտիվ,, քույր կազմակերպության կողմից՝ 50 000 եվրո օժանդակությամբ։ 30 000 ֆրանկ տրվում է ուղիղ Կարմիր խաչի կողմից, այլոց հետ օգնողների թվում է ,,ՆԱԵ- մարդասիրականը,,։

Առաքյալ Ագոստինհո Ալբինո Դզիմբան Մաֆարինայի ավերված եկեղեցում / Մոզամբիկ/, որտեղ միայն զոհասեղանն է դիմակայել փոթորկին։

ՄԵԾ ԽՆՋՈՒՅՔԸ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 14,15-24-Ի

Շաբաթ օր էր: Հիսուսը հացի էր հրավիրվել փարիսեցիների իշխանավորներից մեկի տուն: Նրանից մեկը, ով նստած էր այդ սեղանի մոտ, ասաց Հիսուսին.,, Երանի նրան, ով ճաշ կուտի Աստծո արքայության մեջ,,: Այս առումով Հիսուսը մի առակ՝ պատմեց սեղանակիցներին՝

Մի մարդ ընթրիք սարքեց և հրավիրեց շատերին: Եվ ընթրիքի ժամին իր ծառային ուղարկեց՝ կանչելու հրավիրվածներին, թե՝ ,,Եկեք, որովհետև ահա ամեն ինչ պատրաստ է,,: Եվ ամենքը մեկ-մեկ սկսեցին հրաժարվել: Առաջինն ասաց. ,, Ագարակ գնեցի և պետք է, որ գնամ տեսնեմ, խնդրում եմ քեզ, ինձ հրաժարված համարիր,,: Եվ մյուսն ասաց.,, Հինգ լուծ եզներ գնեցի, գնում եմ դրանք փորձելու, խնդրում եմ քեզ, ինձ հրաժարված համարիր,,: Երրորդն ասաց. ,, Կին եմ առել և դրա համար էլ չեմ կարող գալ,,: Եվ ծառան եկավ ու իր տիրոջը պատմեց այս: Այդ ժամանակ, բարկանալով, տանտերն իր ծառային ասաց.,, Իսկույն դուրս եկ քաղաքի հրապարակներն ու փողոցները և աղքատներիրն, խեղանդամներին, կաղերին ու կույրերին բեր մտցրու այստեղ: Ծառան բերեց բոլորին և ասաց.,, Տեր, ինչ հրամայեցիր՝ կատարվեց ու էլի տեղ կա,,:
Եվ տերը ծառային ասաց.,, Դուրս եկ ճանապարհներն ու ցանկապատների առաջ և մարդկանց այստեղ մտցրու, որպեսզի տունս լցվի: Ասում եմ ձեզ, որ այդ հրավիրվածներից ոչ ոք իմ ընթրիքից չի ճաշակի,,:



Աղբյուրը՝ ամսագիր՝ ,, Մենք՝ երեխաներս,, հրատարակություն 02/2019, ձևավորումը՝ Միրելլա Ֆորտունատոյի

ԱՅՑ ՄԱՐԻԱՆԳԵԼԻՆ՝ ՍԱՆ ԺՈԶԵՈՒՄ/ ԿՈՍՏԱ ՌԻԿԱ/

Իմ անունը Մարիանգել է և ես սիրում եմ կիրակի օրվա նախաճաշի ժամը, քանի որ մենք այդ ժամանակ ընտանիքով հավաքվում ենք և միասին հանգիստ նախաճաշում: Իմ սիրելի ուտեստներն են՝ պանրով սպագետտին, մսով ապուրը և տապակած կարտոֆիլը:

Fotos: privat

Քանի որ իմ ծնողները չեն կարողանում հոգ տանել ինձ համար, ես ապրում եմ տատիկիս ու պապիկիս մոտ: Իմ տատիկի անունը Լենա է, իսկ պապիկիս անունը՝ Օսկար Ադոլֆո, ես նրանց անվանում եմ մայրիկ և հայրիկ:

Կիրակի օրվա նախաճաշից հետո մենք մեկնում ենք Տիրրասեսի եկեղեցի՝ ժամերգության: Նախորդ տարվանից սկսած ես հաճախում եմ կիրակնօրյա դպրոց: Պարապմունքներն անց են կացնում մայրս և մորաքույր Ֆանիան: Երկուսն էլ ուսուցչուհիներ են՝մայրս դասավանդում է Սան Ժոզեի կրտսեր դպրոցում, իսկ մորաքույր Ֆանիան նախակրթարանի ուսուցչուհի է: Ինձնից բացի մեր համայնքի կիրակնօրյա դպրոց են հաճախում Մատհեվը, Մաթեոն, Էման ու Դոմինիկը: Ես հաճույքով եմ երգում: Իմ հորեղբայր Ֆաբիոն երգեհոն է նվագում իր մանկությունից ի վեր և մեզ նոր երգեր է սովորեցնում:

Այս լուսանկարը հիշեցնում է շրջանային առաքյալ Լեոնարդ Ռ. Կոլբի այցը: Նա ապրում է ԱՄՆ-ում, սակայն իրավասու է նաև Կենտրոնական Ամերիկայում, որին պատկանում է նաև Կոստա Ռիկան:

Կոստա Ռիկան գտնվում է Խաղաղ օվկիանոսի և Կարիբյան ծովի միջև: Երկիրն իր անվան համար պարտական է Քրիստափոր Կոլումբոսին: Երբ ծովագնացները ոտք դրեցին ծովափին, նա տեսավ, որ բնակիչները ոսկյա զարդեր են կրում: Դրա համար էլ Կոլումբոսը երկիրն անվանեց Կոստա Ռիկա / հարուստ ծովափ/: Մենք ապրում ենք Կոստա Ռիկայի թիվ 1 նահանգում, մեր երկրի այրաքաղաքում, այն կոչվում է Սան Ժոզե:.

Մայիսին ես դարձա տասնմեկ տարեկան: Ես հաճախում եմ կրտսեր դպրոցի չորրորդ դասարան, որը կրում է Կոստա Ռիկայի ազգային հերոսներից մեկի՝ Ժուան Սանտամարիայի անունով: Նա որպես թմբկահար է ծառայել Կոստա Ռիկայի բանակում, նրա օգնությանբ բանակը հաղթանակ է տարել ճակատամարտերից մեկում և պաշտպանել է երկրի անկախությունը: Իմ սիրելի առարկան մաթեմատիկան է, ես սիրում եմ լուծել մաթեմատիկական խնդիրներն ու հավասարումները: Բացի դրանից, ես ցանկանում եմ մասնակցել դպրոցականների արվեստի փառատոնին: Այս տարի ես ընտրելու եմ դիմակներ, գունավոր գծանկարչություն և լուսանկարչություն առարկաները:

Ես սիրում եմ չմուշկներով սահելը և հաճույքով ջութակ նվագել կսովորեի: Ես մասնակցում եմ երգեհոնի պարապմունքին և դպրոցում մի քիչ սովորել եմ սրինգ նվագելը: Տանը ես հաճույքով խաղում եմ լեգոներով և տիկնիկներով: Իմ սիրելի գույնը շիկակարմիրն է: Ես կարծում եմ, որ դա ուրախ գույն է:.



Աղբյուրը՝ ամսագիր՝ „Մենք՝ երեխաներս„; հրատարակություն 02/2019; Լուսանկարները՝ մասնակիր, stock.adobe.com: © ondrejprosicky, © Simon Dannhauer, © Jordan, © Arayan, © Patrick Bet

Պաշտոն հասկացությունը

Պաշտոնի երեք մակարդակներ, ղեկավար գործունեության հինգ մակարդակներ, հետագայում ավետարանչի, հովվի, շրջանային ավետարանչի, շրջանային ավագի ձեռնադրության, եպիսկոպոսի նշանակման կարգի վերացում, տարբերություն ձեռնադրության, հանձնարարության և նշանակման միջև – Նորառաքելական եկեղեցու պաշտոն հասկացությունն առաջարկում է արդեն ծանոթ և նոր կանոններ՝ նոր ակնարկ:

Պաշտոն հասկացությունը հիմնված է նոր կտակարանային վկայության վրա և պետք է կատարվի Հիսուս Քրիստոսի անձի գործին և էությանը համահունչ: Առաքյալների ծառայությունը, որը հիմնվել է Հիսուսի կողմից,,, ունի առաջադրանք ,, Աստծո գաղտնիքների տնտեսը,, լինելու / ՆԱԵԴ 4,1/ ՆԱԵԴ Հ/Պ 421-433/: Դրանով է նաև պայմանավորված այն, որ պաշտոնների կարգավորումը կատարվի և հաստատվի ժամանակի շնչին համապատասխան:

Պաշտոնի սկզբնաղբյուրը

,, Այն ամենը, ինչը հիմնում է եկեղեցին և կա, ունի իր սկզբնաղբյուրը ի դեմս Հիսուս Քրիստոսի անձի և գործի, ով փրկությունն է և այն բերողը,, / ՆԱԵԴ 6,2,2, ՆԱԵԴ Հ/Պ 368,369/: Հիսուս Քրիստոսը ունի երկու բնություն, դրան հավատում և խոստովանում են բոլոր դավանանքների քրիստոնյաները՝ նա ճշմարիտ մարդ է և ճշմարիտ Աստված / ՆԱԵԴ 3,4,3/ ՆԱԵԴ Հ/Պ 104-106/: Հիսուսի անձը, որը դրոշմված է երկու բնությամբ և նրա գործերը չափանիշ են դառնում եկեղեցու և այն ամենի համար, ինչը պատկանում է նրա առաջադրանքին ու կերպարին: Դրա համար էլ տրամաբանական է, որ եկեղեցու, խորհուրդների և պաշտոն հասկացության մասին ուսմունքը լինի երկու բնության հետ կապի մեջ: Պաշտոնի և անձի հարաբերության որոշման միջոցով դա պետք է հստակեցվի:

Պաշտոնի էությունը

Պաշտոնն ու անձը սերտ կապի մեջ են միմյանց հետ, դրանք միաժամանակ միմյանց հետ միահյուսված են: Կա համապատասխանություն Քրիստոսի երկու բնության և պաշտոնի ու անձի հարաբերության միջև: Այս առումով, պաշտոնը վկայակոչում է աստվածային բնությունը, անձը՝ պաշտոնը կրողի մարդկային բնությունը:

Պաշտոն և անձ

Այն լավ հատկանիշներն ու ունակությունները, որ ունի անձը, ձեռնադրության արարողության ժամանակ ներդրվում են պաշտոնավարման ծառայության մեջ: Սակայն, ձեռնադրության հետ կապված չէ որևէ նոր շնորհի փոխանցում:

Պաշտոն կրողը գործում է Հիսուս Քրիստոսի կամքի համաձայն՝ առաքյալների ծառայության հետ միասնության մեջ: Նա համայնքի սպասավորն է և ձգտում է խոսքով ու գործով համապատասխանել Ավետարանին: Պաշտոնը և անձը, պաշտոնավարումն ու կյանքի վարումը պետք է համաձայնեցված լինեն նրանով, որ երկուսն էլ խոսքով ու գործով Հիսուս Քրիստոսով կատարվեն:

Պաշտոն կրողը պետք է տեղեկացնի և ներկայացնի Ավետարանը և այն էլ նորառաքելական հավատամքի իմաստով և մեկնաբանությամբ, ինչպես որ գրված է նորառաքելական եկեղեցու դավանաբության մեջ: Պաշտոն կրողը ցույց է տալիս Ավետարանին համապատասխան գործելու իր լուրջ վերաբերմունքը, եթե նա ընդունում է եկեղեցու աստվածաբանական կրթության առաջարկը և այն ամենը, ինչը նպաստում է եկեղեցական ծառայությունը կատարելուն:

Թեև նորառաքելական հասկացողությամբ պաշտոնն ու անձը սերտ կապի մեջ են, այնուամենայնիվ, այնպես չէ, որ պաշտոնը նորից չի կարող անձից բաժանել: Պաշտոնը անձի սեփականությունը չէ, այն անձի ոչ լուծելի դրոշմը չէ, այլ կա և մնում է Քրիստոսի ընծան, որին տիրում է Հիսուս Քրիստոսը, և որը նա արժևորում է կամ արժեզրկում: Այսինքն՝ հնարավոր է պաշտոնի լուծումը կամ բաժանումը անձից:

Պաշտոն և լիազորություն

Հիսուսը ուղարկված է Աստծո կողմից համապատասխան լիազորություններով:

,, Տիրել և ղեկավարել, Աստծո հետ հաշտվողականությանը նպաստել, Աստծո կամքը տեղեկացնել և ապագան կանխատեսել, այս ամենը կատարյալ ձևով գտնվում է Հիսուս Քրիստոսի մեջ,, / ՆԱԵԴ 3,4,7/ ՆԱԵԴ Հ/Պ 116/:Առաքելոց ծառայությունը մասն ունի Հիսուս Քրիստոսի լիազորությունից. ,, Առաքելական պաշտոնը Քրիստոսի կողմից տրված և Սուրբ Հոգու կողմից ղեկավարվող առաքյալների ծառայությունն է իր լիազորություններով՝ Ավետարանի տեղեկացում, խորհուրդների նվիրաբերում, մեղքերի թողություն,, / Մատթ. 28,19; Հովհ. 20,23; ՆԱԵԴ 6,4,1,4/: Առաքյալը, որպես Քրիստոսի կողմից ուղարկված՝ մասնակցություն ունի նրա քահանայապետությանը, որի մասին խոսվում է եբրայեցիներին գրված թղթում / Եբր. 4,14/ ՆԱԵդ-Հ/Պ 425/:

Ոչ բոլոր պաշտոններն ունեն նույն լիազորությունը: Առանձին պաշտոնների տարբեր լիազորությունների վրա հիմնվել են պաշտոնի երեք մակարդակներ՝ առաքյալ, քարոզիչ, սարկավագ: Հավատամքի հինգերորդ գլխում գրված է. ,, Ես հավատում եմ, որ Աստծո կողմից պաշտոնի համար ընտրվածները ձեռնադրվում են միայն առաքյալների կողմից և, որ իրենց ծառայության համար լիազորությունը, օրհնանքը և սրբացումը ստանում են առաքյալներից ,, / ՆԱԵԴ 2,4,5/ ՆԱԵԴ Հ/Պ 37,45/:

Քարոզչական պաշտոն կատարողներն ու սարկավագները տարբեր ձևերով առաքյալների պաշտոնական լիազորության մասն ունեն: Քարոզչական պաշտոններ կրողներին վստահված է սուրբ ջրով մկրտության խորհրդի կատարումը և Սուրբ Հաղորդության նվիրաբերումը՝ մեղքերի թողության, Ավետարանի ճիշտ տեղեկացման և օրհնանքի արարողությունների անցկացման հետ միասին/ ՆԱԵԴ 7,9,//ՆԱԵԴ Հ/Պ 452,469/: Սարկավագները խորհուրդներ կատարելու լիազորություն չունեն, սակայն նրանք, քարոզիչների նման լիազորություն ունեն Ավետարանը տեղեկացնելու / ՆԱԵԴ 2,4,5/ ՆԱԵԴ Հ/Պ 45/ և խոսքային ժամերգության ժամանակ Երրորդության օրհնանքը նվիրաբերելու:

Լիազորություն և խորհուրդների նվիրաբերում

,, Խորհուրդների ծավալուն կատարումը, այն է՝ սուրբ ջրով մկրտության, Սուրբ Հոգով կնքելու և Սուրբ Հաղորդության նվիրաբերումը վստահված է առաքելոց ծառայությանը,, / ՆԱԵԴ 6,4,4/ ՆԱԵԴ Հ/Պ 402,404

Քարոզչական պաշտոնը առաքելական լիազորության մասն ունի խորհուրդների նվիրաբերության առումով, այն կարող է նվիրաբերել ինչպես Սուրբ Հաղորդությունը, այնպես էլ սուրբ ջրով մկրտությունը:

Պաշտոն և խոսքի տեղեկացման լիազորություն

,, Ուսուցանելու առաջադրանքը վերաբերում է Տիրոջ մահվան, հարության և գալստյան մասին Ավետարանի ճիշտ տեղեկացմանը,,/ ՆԱԵԴ 2,4,4 / ՆԱԵԴ Հ/Պ 44/: Այստեղ հստակեցվում են նախ և առաջ բովանդակային շրջանակները, որով տեղի է ունենում Ավետարանի տեղեկացումը:

Ճիշտ տեղեկացումը հիմնված է միայն Քրիստոսի խոսքի վրա, որը վկայվում է Նոր կտակարանում: Այն դառնում է ընդունելի, առաջատար և ամրացնում է հավատը / Հռոմ. 10,17/: ,,Քրիստոսի խոսքը,, , այսինքն՝ նրա քարոզը, որը եղել է առաքյալների և Հիսուսի ժամանակակիցների ժամանակ, շարունակվում է լիազորված փոխանցվել առաքելոց ծառայության և այդ ծառայության հետ կապված պաշտոնների միջոցով :

Գլխավոր առաքյալը շեշտում է, որ Աստվածաշունչը հիմքն է ճիշտ քարոզի, իսկ ներկայիս առաքյալները առաջադրանք և կարողություն ունեն Սուրբ Հոգու օգնությամբ մեկնաբանելու Աստվածաշունչը: Ճիշտ տեղեկացմանը մասնակցում են քարոզիչները և սարկավագները՝ առաքելոց ծառայության լիազորությամբ:

Պաշտոնների կառուցվածքը

Այն բանից հետո, երբ խոսվեց պաշտոն հասկացողության էական աստվածաբանական ասպեկտի մասին, ստորև պետք է ներկայացվի պաշտոնների կառուցվածքը:

Պաշտոնների կառուցվածքը հիմնված է պաժտոնի երեք մակարդակների վրա՝ առաքելոցծառայություն, քարոզչական պաշտոն և սարկավագության պաշտոն՝ հոգևոր տարբեր լիազորություններով: Ապագայում ձեռնադրվելու են միայն առաքյալները, քարոզիչները և սարկավագները: Մնացած պաշտոնների հետագայում այլևս չեն կարգվելու, ինչպես օրինակ, համայնքի ավագի և ենթասարկավագի պարագայում է:

Պաշտոնի լիազորություն և պաշտոնի առաջադրանք

Այս երեք պաշտոններին հատկացված են հստակ լիազորություններ: Լիազորություն հասկացությունը վերաբերում է միայն նրան, թե ինչ արարողությունների իրավունք ունեն կատարել այս կան այն պաշտոն կրողները / խորհուրդների նվիրաբերում, օրհնանքի արարողությունների անցկացում, Ավետարանի հանրային տեղեկացում/:

Ein Amt umfasst sowohl die Amtsvollmacht als auch den Amtsauftrag. Die Amtsvollmacht ist theologischer, der Amtsauftrag ist kirchenrechtlicher Natur.Պաշտոնի լիազորությունը տրվում է ձեռնադրության միջոցով: Առաքյալների կողմից այն վերցրվում է պաշտոնը վայր դնելուց, պաշտոնից հեռացվելուց կամ մահից հետո:

- Պաշտոնի լիազորությունը տրվում է ձեռնադրության միջոցով: Առաքյալների կողմից այն վերցրվում է պաշտոնը վայր դնելուց, պաշտոնից հեռացվելուց կամ մահից հետո:
  Պաշտոնի լիազորությունը տրվում է ձեռնադրության միջոցով: Առաքյալների կողմից այն վերցրվում է պաշտոնը վայր դնելուց, պաշտոնից հեռացվելուց կամ մահից հետո:
- Պաշտոնի առաջադրանքի սահմանում՝ Պաշտոնի առաջադրանքով պաշտոն կրողները ստանձնում են իրավունք և պարտականություն իրենց ծառայությունը իրականացնելու պաշտոնի լիազորությամբ ամրագրված տեղի և ժամանակի շրջանակում:
  Պաշտոնի առաջադրանքը ավարտվում է իրավասությունը փոխելուց, հանգստի անցնելուց, առաքյալի կողմից պաշտոնը վայր դնելուց, պաշտոնից հեռացումն ընդունելուց կամ մահից հետո:

Ձեռնադրություն – Հանձնարարություն – Նշանակում

Այս երեք կատեգորիաները - Ձեռնադրություն – Հանձնարարություն – Նշանակում- բովանդակությամբտարբերվումեն:Ձեռնադրության դեպքում ստանձնում են պաշտոնի լիազորություն: Հանձնարարության դեպքում ստանձնում են հոգևոր ղեկավարի և վարչական ֆունկցիա կատարելու դերը: Նշանակման դեպքում որևէ մեկին հոգևոր առումով գլխավոր ծառայություն է վստահվում: Ձեռնադրության, հանձնարարության, նշանակման դեպքերում հավասարապես կարևորվում են անձնական և մասնագիտական որակները: Հանձնարարություններն ու նշանակումները կարող են լիմիտավորվել ժամանակավորպես: Ձեռնադրություններն ու հանձնարարությունները տեղի են ունենում ժամերգության ժամանակ Սուրբ Հաղորդությունից հետո՝ դրանք ընդունվում են ծնկաչոք:

Առաքյալների, քարոզիչների և սարկավագների ձեռնադրություն

Որ Աստված որևէ մեկին պաշտոնի համար ընտրում է և որ դա յուրաքնչյուր ձեռնադրության հիմքն է, անսահման կարևոր է նաև պաշտոնների կարգավորման մեջ: Որևէ պաշտոնի համար ձեռնադրությունը Աստծո գործն է մեղավորի հանդեպ ՝ ի ծառայություն Աստծուն և մարդուն:,, Ձեռնադրությունը դա հոգևոր պաշտոնի դնելն է: Այն իրականացվում է Երրորդություն Աստծո անունով՝ առաքյալի կողմից ձեռքերը ձեռնադրվողի գլխին դնելով և աղոթելով: Նրանով ընդունվում է լիազորություն, սրբացում և օրհնանք: Դա հետևում է իրավասությունների այն ուսումնասիրությանը, որոնք պահանջվում են տվյալ պաշտոնի հետ կապված ծառայության գործում: Ձեռքը գլխին դնելով խնդրվում է Սուրբ Հոգու աջակցությունը այդ ծառայության կատարման գործում,, / Հիմնական մտքեր, հատուկ համար 04/2017/: Այսինքն՝ ձեռնադրությունը բնութագրում է մի արարողություն, որի ժամանակ ստանձնում են ինչպես լիազորություն, այնպես էլ օրհնություն և սրբացում: Ձեռնադրվում են հետևյալ պաշտոնների համար ՝

- գլխավոր առաքյալ և առաքյալ,
- քարոզիչ,
- սարկավագ:

Առաքյալի, քարոզչի և սարկավագի լիազորությունը

կնքվելու նվիրաբերումը, ինչպես նաև Ավետարանի տեղեկացումը: Մյուս պաշտոնների լիազորությունները բխում են առաքելոց ծառայության լիազորությունից: Սրան համապատասխանում է հավատամքի հինգերորդ դրույթը՝ ,, Ես հավատում եմ, որ Աստծո կողմից պաշտոնի համար ընտրվածներըը ձեռնադրվում են առաքյալի կողմից և, որ նրանց ծառայության համար լիազորությունը, օրհնանքը և սրբացումը բխում է առաքելոց ծառայությունից,,:

Ձեռնադրության ժամանակ քարոզիչը Ավետարանի ճիշտ տեղեկացման հետ մեկտեղ ստանում է լիազորություն առաքյալի առաջադրանքով մեղքերին թողություն տալու համար, սուրբ ջրով մկրտության խորհրդի և Սուրբ Հաղորդության նվիրաբերման, ինչպես նաև օրհնանքի

արարողության անցկացման համար: Մեղքերի թողության տեղեկացման լիազորությունը և նշված երկու խորհուրդների՝ օրհնանքի և սրբացման նվիրաբերումը, առաքյալի կողմից Սուրբ Հոգու զորությամբ փոխանցվող հոգևոր զինում է:

Սարկավագը ձեռնադրության ժամանակ ստանում է լիազորություն, այսինքն՝ առաքյալի կողմից սուրբ Հոգու զորությամբ հոգևոր առումով զինվում է՝ ժամերգության և հոգին խնամելու նպատակով այցերի ժամանակ Ավետարանի ճիշտ տեղեկացման համար , ինչպես նաև խոսքի ժամերգության ժամանակ Երրորդության օրհնանքի նվիրաբերման համար:

Առաքյալների և քարոզչական պաշտոնների համար հանձնարարություն

Պաշտոնի կրողները կարող են ղեկավար դեր ընդունելու հանձնարարություն ստանալ տարածաշրջանային եկեղեցում, տարածաշրջանում կամ համայնքում:

Թեև առաքելոց ծառայությունը ղեկավար կամ կառավարող բնույթ ունի,/ այսինքն՝ մասն ունի Քրիստոսի երեք պաշտոնների՝ թագավոր, քահանա և մարգարե / ՆԱԵԴ 3,4,7/ ՆԱԵԴ Հ/Պ 116/, առաքյալները կարող են այլ ղեկավար ֆունկցիայի համար հանձնարարություն ստանալ: Քարոզչական պաշտոն կատարողները կարող են որևէ տարածաշրջանում կամ համայնքում ղեկավար ֆունկցիա կատարելու հանձնարարություն ստանալ:

- Առաքյալը շրջանային առաքյալ դառնալու հանձնարարություն է ստանում:
- Քարոզչական պաշտոն կրողը ստանում է շրջանային առաջնորդի կամ համայնքի առաջնորդի ֆունկցիան կատարելու հանձնարարություն:

Հանձնարարությունը Երրորդություն Աստծո անունով կատարվում է գլխավոր առաքյալի, շրջանային առաքյալի և առաքյալի կամ դրա համար առաքյալի կողմից լիազորված սպասավորի միջոցով՝ ձեռքերը գլխներին դնելով և աղոթքով: Դրանով ընդունում են սրբացում և օրհնանք: Այն կատարվում է անձի որակների ուսումնասիրությունից հետո / օրինակ, հոգին խնամելու, ուսուցանող և կազմակերպչական/, որոնք պահանջվում են տվյալ ղեկավար ֆունկցիայի հետ կապված ծառայության համար: Հանձնարարությունը կապված չէ պաշտոնի վարման ժամանակի հետ, բայց այն ավարտվում է նրա հետ:

Առաքյաների և քարոզչական պաշտոնների նշանակում

Նշանակումը հոգևոր պաշտոնի ստանձնումն է: Այն իրականացվում է առաքյալի կամ քարոզչական պաշտոն կատարողի կողմից: Այն կատարվում է անձի որակների ուսումնասիրությունից հետո / օր, հոգին խնամելու, ուսուցման և կազմակերպական/, որոնք պահանջվում են տվյալ ծառայության համար: Այդ ծառայության կատարման համար խնդրվում է Աստծո օրհնանք:

Գլխավոր առաքյալը, շրջանային առաքյալը, առաքյալը և քարոզչական պաշտոն կատարողները, ովքեր կատարում են ղեկավար ֆունկցիա, կարող են առանձնահատուկ աջակցություն ստանալ՝ ի դեմս օգնականների կամ տեղակալների:

- Առաքյալը նշանակվում է գլխավոր առաքյալի, շրջանային առաքյալի օգնական կամ ,, ղեկավարող առաքյալ,,;
- Քարոզչական պաշտոն կատարողը նշանակվում է եպիսկոպոս՝ որպես առաքյալի օգնական:
- Քարոզչական պաշտոն կատարողը կարող է նշանակվել շրջանային կամ համայնքի առաջնորդի տեղակալ:

Պաշտոնի առաջադրանքի և պաշտոնի լիազորության ավարտում

Պաշտոնը իր երկու բաղադրիչներով՝ պաշտոնի առաջադրանք և պաշտոնի լիազորություն, կարող է տարբեր ձևերով ավարտվել: Հանգստի ուղարկումով ավարտվում է միայն պաշտոնի առաջադրանքը, իսկ պաշտոնը վայր դնելը կամ պաշտոնից հեռացումը ընդունելու դեպքում ավարտվում է ինչպես պաշտոնի լիազորությունը, այնպես էլ պաշտոնի առաջադրանքը:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդշթրասսե 243,8051 Ցյուրիխ / Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆ հրատարակչություն ՓԲԸ, Ֆրանկֆուրտյան փողոց 233,63263 Նոյ-Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Տեղեկացում

06.07.2019	Ինկիսի(Կոնգոյի ԴՀ)
07.07.2019	Կինշասա (Կոնգոյի ԴՀ)
20.07.2019	Նդոլա (Զամբիա)
21.07.2019	Լուսակա (Զամբիա)
28.07.2019	Նորդերշթեդթ (Գերմանիա)
02.08.2019	Լա Պաս (Բոլոիվիա)
04.08.2019	Սան Պաուլո (Բրազիլիա)
11.08.2019	Ցյուրիխ (Շվեյցարիա)
18.08.2019	Բրամպթոն(Կանադա)
15.09.2019	Ափիա (Սամոա)
15.09.2019	Պագո Պագո (Ամերիկյան Սամոա)
22.09.2019	Քրիստչըրչ (Նոր Զելանդիա)

New Apostolic Church
International